

Ամուլսարի ոսկու արդյունահանման ծրագիր Հայաստան

սկզբնական տարբերակ՝
օգոստոս 2015թ.

Կենսամիջոցների վերականգնման պլան
Թարմացված՝ սեպտեմբեր 2016



հեղինակ՝ Սոցիալական զարգացման գծով մենեջեր և հողի ձեռքբերման
համադրված Ն.Ղազարյան

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

«Լիդիան Արմենիա» ընկերության կողմից կազմված սույն փաստաթղթում համառոտ ներկայացված է «Հայաստանում Ամուլսարի ոսկու հանքի արդյունահանման ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) համար մշակված **Կենսամիջոցների վերականգնման պլանը (ԿՎՊ)**, որի նպատակն է տեղեկացնել հողատերերին, հովիվներին և այլ ազդակիր անձանց հողի ձեռքբերման գործընթացով պայմանավորված կենսամիջոցների վերականգնմանն ուղղված Ընկերության պլանների մասին:

Սույն փաստաթղթի նպատակն է ներկայացնել կենսամիջոցների վերականգնմանը վերաբերող հիմնական տեղեկություններն ու ԿՎՊ-ին վերաբերող մոտեցումները, ոլորտները և ծրագրերը:

Այս ԿՎՊ-ն համալրում է առկա փաստաթղթերի շարքը, այն է՝ «Հողի ձեռքբերման, հատուցման և կենսամիջոցների վերականգնման պլանը» ու «Հողի ձեռքբերման և հատուցման ուղեցույցը» և համապատասխանում է Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) Կատարողական Չափանիշ 5-ի և Վերակառուցման ու զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) Կատարողական պահանջ 5-ի պահանջներին:

1.2. ԿԵՆՍԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Ստորև ներկայացված են (հողի ձեռքբերման արդյունքում) տնտեսական կարգավիճակի խախտման հետևանքների մեղմացման և կենսամիջոցների վերականգնման հիմնական սկզբունքները.

- Կենսամիջոցների վերականգնման միջոցառումները մշակվում և իրականացվում են որպես կայուն զարգացման ծրագրեր 3 տարի տևողությամբ: Դրանց նպատակն է ազդակիր հողատերերի համար ապահովել կենսամիջոցների վերականգնման այլընտրանքային աղբյուրներ:
- ԿՎՊ միջոցառումները կներառեն մի քանի կարևոր ոլորտներ, մասնավորապես. հմտությունների և տեղի կարողությունների հզորացում, լավագույն փորձի կիրառում (հողի, անասնաբուծության, բնական ռեսուրսների կառավարում) և տեխնիկական գիտելիքների ձեռքբերում ու բիզնեսի զարգացում՝ կայունության պոտենցիալով:
- Հնարավորության դեպքում ԿՎՊ միջոցառումները կիրականացնեն տեղական գնումներ և կվարձեն տեղի աշխատուժ, բարելավելու բիզնես միջավայրը, կբարձրացնեն տեղական ստանդարտները, կստեղծեն տեղացիների համար աշխատանքային հնարավորություններ: Որպես օրինակ կարելի է բերել տեղացի դասավանդողների և մասնագետների ներգրավումը հմտությունների ուսուցման կամ անասնաբուծության զարգացման ծրագրերում:
- Հնարավորության դեպքում, ԿՎՊ միջոցառումները կաջակցեն տեղական կառույցների (կոոպերատիվներ և այլն) զարգացմանն ու հզորացմանը, որպեսզի նրանք վարեն, կառավարեն և կայունացնեն տեղի բիզնեսները, ծառայությունները կամ այլ ձեռնարկություններ:

- Կանանց և ազդակիր խոցելի ընտանիքների ներգրավման ու աջակցության համար նախատեսվում է ձեռնարկել որոշակի քայլեր:
- ԿՎՊ միջոցառումները կպահանջեն ներդրումներ ծրագրի մասնակիցների կողմից դրամական կամ ոչ-դրամական, համատեղ սեփականության ու կայունության խթանման, ինչպես նաև կախվածությունից խուսափելու նպատակով:
- Հաջողված և լավ մոդելները կիրականացվեն այլ համայնքներում, և/կամ կընդլայնվեն (օրինակ՝ մրգերի չորանոցը, տեղական կառույցներ, կոոպերատիվներ):
- Ազդակիր հողատերերին (և նրանց ընտանիքի անդամներին), ներառյալ խոցելի խմբերին, հնարավորություն է ընձեռնված մասնակցելու ԿՎՊ միջոցառումներին, նրանց հետ քննարկումներից քաղված կարծիքները հաշվի են առնվում հաջորդ 3-ամյա ԿՎՊ ծրագրերի մշակման ժամանակ:
- Գործում է գանգատարկման մեխանիզմ, որը հասանելի է կենսամիջոցների վերականգնման միջոցառումների իրականացման ողջ ընթացքում:

2. ԿԵՆՍԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԵԼԱԿԵՏ

2.1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

2015թ. մայիս-օգոստոս ամիսների ընթացքում Գնդեվազում իրականացված սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների ժամանակ բնակիչների կողմից նշվեցին հաջորդ մի քանի տարիների ընթացքում զարգացման նախընտրելի որոշ բնագավառներ (տես ստորև ներկայացված Աղյուսակ 1-ը): Տարբեր ուսումնասիրությունների արդյունքում ստացված հիմնական եզրակացություններից պարզ է դառնում, որ տեղացի բնակիչները նախընտրում են զարգացնել ավանդական համարվող կենսամիջոցները (գյուղատնտեսություն և անասնապահություն):

Աղյուսակ 1. Գնդեվազի բնակիչների և ազդակիր հողատերերի կողմից առաջարկված բնագավառներ և գործողություններ

Բնագավառ/սեկտոր	Գործողություն /ծրագիր
Զբաղվածություն	✓ Հանքին առնչվող աշխատանքներ
Արտադրություն & գյուղատնտեսական արտադրություն	✓ Մննդի մշակման (պահածոյացման և այլ) արտադրությունների հիմնում
	✓ Տեղական կաթնամթերքի արտադրության նախաձեռնում
Գյուղատնտեսական ծրագրեր	✓ Հողի կառավարում & մշակում
	✓ Հողի կառավարման և որակի կառավարման բարելավում
	✓ Նոր այգիների հիմնում
	✓ Հակակարկտային կայանների ստեծում
	✓ Այգեգործության և բանջարաբուծության զարգացում
	✓ Ընտանեկան ջերմոցների հիմնում
	✓ Ոչ ավանդական մշակաբույսերի ներմուծում
	✓ Թռչնաբուծության զարգացում
	✓ Մեղվաբուծության զարգացում
	✓ Գյուղատնտեսական արտադրանքի սպառման կետերի հայտնաբերում
	✓ Ոռոգման համակարգի բարելավում

	<ul style="list-style-type: none"> ✓ Գյուղատնտեսական միջոցների ապահովում՝ բուժում, սերմեր, պարարտանյութ և այլն ✓ Միկրոֆինանսավորման (վարկերի) տրամադրում բիզնեսի աջակցման նպատակով
Անասնապահություն	<ul style="list-style-type: none"> ✓ Անասնապահության, արհեստական սերմնավորման զարգացում ✓ Արոտավայրերի զարգացում, հեռավոր արոտավայրերի օգտագործում ✓ Տեխնիկական աջակցություն, սարքավորումներ ✓ Լավ պայմաններով (տոկոսներով) վարկավորում
Տուրիզմի զարգացում	<ul style="list-style-type: none"> ✓ Տեղական պատմական հուշարձանների օգտագործում զբոսաշրջիկների ներգրավման նպատակով

2.2. ՀՈՂԻ ԶԵՌՔԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.2.1. ՄՇԱԿԱԲՈՒՑՄԵՐ

Ընկերության կողմից ձեռքբերված հողերը ներառում են ծիրանի այգիներ, վարելահող (ցորեն, առվույտ և այլն) և խոտհարքի կամ արոտավայրերի նպատակով օգտագործվող խոտածածկ տարածքներ: Հանքի հիմնական ենթակառուցվածքները տեղակայված են լինելու Գնդեվազի տարածքում, ներառելով կույտային տարրավազման հրապարակը (ԿՏՀ)՝ տեղամաս 28-ը, փոխակրիչը - տեղամաս 14-ը և դատարկ ապարների լցակույտը (ԴԱԼ) - տեղամաս 29-ը: Հանքավուտերը գտնվում են Գորայքի տարածքի սահմաններում, սակայն դրանք հանդիսանում են պետական սեփականություն, հետևաբար մասնավոր հողատերերը որևէ ազդեցության չեն ենթարկվի: Հարևան համայնքներ Սարավանի, Զերմուկի և Կեչուտի հողերը նույնպես ազդակիր չեն համարվում: ԿՏՀ-ն և փոխակրիչը ընդհանուր առմամբ ներառում են 278 մասնավոր հողակտոր՝ 152 հեկտար ընդհանուր տարածքով:

Ծիրանի այգիները Գնդեվազի բնակիչներից շատերի համար հանդիսանում են հիմնական եկամուտի աղբյուր: Ազդակիր տարածքում աճում են նաև այլ մրգատու ծառեր՝ խնձորի, դեղձի և սալորի ծառեր: Որոշ հողակտորներ օգտագործում են տարեկան մշակաբույսերի, այդ թվում՝ գարնանային և աշնանային ցորենի, գարու և այլնի աճեցման նպատակով: ԿՏՀ տարածքի հյուսիս-արևմտյան մասում մի շարք փոքր հողատարածքներ օգտագործվում են բանջարեղեն աճեցնելու համար. արտադրանքի համեմատաբար փոքր մասը հանվում է վաճառքի, իսկ հիմնական մասը սպառվում է ընտանիքներում կամ պահածոյացվում է: Դրանցից են կարտոֆիլը, մրգատու ծառերն ու բանջարեղենը:

2.2.2. ՀՈՎԻՎՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ Ծրագրի վերջնական նախագծի, մոտ 40 սեզոնային հովիվ (տեղամաս 13) ազդեցության կենթարկվեն. ակնկալվում է, որ նրանք կտեղափոխվեն այլընտրանքային տարածքներ, քանի որ որպես արոտավայր օգտագործվող հողերը կզբաղեցվեն Ծրագրի ենթակառուցվածքների համար կամ էլ կխաթարվեն հանքի գոծողությունների արդյունքում: Այս տեղափոխության արդյունքում

անհրաժեշտություն կլինի հիմնել նոր կացարան/վրաններ հովիվների համար կամ էլ տեղափոխել հները նոր տարածքներ: Գնդեվազի և Խնձորեսկի գյուղապետերի, ինչպես նաև սեզոնային հովիվների հետ պայմանավորվածության արդյունքում ընտրվել են արածեցման համար այլընտրանքային տարածքներ:

Տեղամաս 14-ի (փոխակրիչի) հողերը վարելահող չեն և օրական հովիվների կողմից օգտագործվում են արածեցման և խոտհարքի նպատակով, անասունների արածեցումն իրականացվում է հովիվների կողմից ռոտացիոն սկզբունքով: Ողջ տարածքի հասանելիությունն ապահովելու նպատակով նախատեսվում է կենդանիների, մարդկանց և մեքենաների համար կառուցել անցուղիներ: Այս տարածքից ստացված խոտը նույնպես հանդիսանում է եկամուտի աղբյուր:

2.3. ԵՆԹԱԿԱՌՈՒԻՑՎԱԾՔ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղամաս 13-ում առկա չեն որևէ շինություններ, քանի որ որպես ժամանակավոր տնակ կամ կացարան օգտագործվում են քարից, փայտից կամ այլ նյութերից պատրաստված խրճիթներ, որտեղ բացակայում են ցանկացած տեսակի կոմունալ հարմարություններ՝ էլեկտրականություն, կոյուղի, աղբահանություն, ջրամատակարարում և այլն: Այլընտրանքային տարածքներ տեղափոխվելու դեպքում հովիվներին կտրվի փոխհատուցում այդ շինությունների համար:

3. ԿԵՆՍԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

3.1. ԸՆԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հողի համար փոխհատուցում ստացած բոլոր հողատերերն ու հողօգտագործողներն ունեն ԿՎՊ-ին մասնակցելու իրավունք: Այդ իրավունքը տարածվում է ազդակիր հողատերերի կամ հողօգտագործողների ընտանիքների անդամների վրա՝ հնարավորություն տալով նրանց ընդգրկվել ԿՎՊ միջոցառումներում:

Աղյուսակ 2. Ազդակիր խմբեր և հարակից իրավունքներ

Ազդակիր խումբ	Հողի Ձեռքբերման և ԿՎՊ-ով (ՀՀԿՎՊ) սահմանված իրավունքներ	ԿՎՊ-ով սահմանված իրավունքներ	Մեկնաբանություններ
Ազդակիր հողատերեր	Դրամական փոխհատուցում հողի և բերքի դիմաց. Հմտությունների ուսուցման, վերապատրաստման և Ընկերությունում աշխատելու հնարավորություններ	Գյուղատնտեսության, անասնապահության և այլ ԿՎՊ ծրագրեր հասանելիություն, վերապատրաստում և կարողությունների հզորացում, հնարավոր զբաղվածություն, աշխատանք	Թափուր աշխատատեղի համար թեկնածուների ընտրությունը կկատարվի նրանց որակներից ելնելով, և ազդակիր հողատեր լինելը դեռ բավարար չէ Ընկերությունում աշխատելու համար: Այս ֆերմերները հնարավորություն կունենան ընդգրկվել Հմտությունների

			ուսուցման ծրագրերում, և դիմել առկա թափուր աշխատատեղերի համար: Ազդակիր հողատեր լինելու հանգամանքը չի երաշխավորում աշխատանքի տրամադրում:
Սոցիալապես խոցելի հողատերեր	Դրամական/կանխիկ փոխհատուցում հողի և բերքի հանար	Գյուղատնտեսական միջոցներ (սերմեր, տնկիներ և այլն), սոցիալական աջակցություն	Սոցիալական աջակցության ծրագրերի հասանելիություն. սոցիալապես խոցելի խմբերը հաճախ ներառում են միայնակ, տարեց կամ մեկուսացված անձանց, ովքեր ունակ չեն աշխատելու
Ազդակիր հովիվներ, ովքեր ստիպված կլինեն տեղափոխվել այլ արոտավայրեր	Այլընտրանքային հողատարածքների և համապատասխան ենթակառուցվածքների տրամադրում	Անասնապահություն, արածեցման կառավարում և հողօգտագործման բարելավում	Լայնածավալ ԿՎՊ ծրագրերի սահմանափակ հասանելիություն

Բնույթից կախված, ԿՎՊ միջոցառումների մասնակցության համար սահմանված են ընտրության որոշ չափորոշիչներ, օրինակ՝ այգեգործության կամ ջերմոցային տնտեսության համար անհրաժեշտ է հողի և ոռոգման ջրի առկայություն, տվյալ հողատարածքում նախկինում օրգանական պարարտանյութի չկիրառում, բոլոր դասընթացներին ու ուսումնական միջոցառումներին մասնակցություն և պատրաստակամություն, տեխնիկական հրահանգներին հետևելու անհրաժեշտություն, ծրագրային ծախսերում մասնակցություն և այլն: Փոքր բիզնեսի աջակցության ծրագրի համար մասնակիցների վերջնական ընտրությունը կկատարվի՝ բոլոր բիզնես պլանների գնահատման արդյունքներով և գնահատման սանդղակով՝ հաշվի առնելով ծրագրերի կայուն զարգացումը, նրանց ֆինանսական իրագործելիությունը, նորարարությունը, մասնակցի կողմից կատարվող ներդրումը, ինչպես նաև առկա բիզնեսների կամ նորի ստեղծման համար պայմանների վերլուծությունը:

Ընկերության համար անչափ կարևոր է ապահովել ԿՎՊ ծրագրերով սահմանված օգուտների հնարավորինս հավասար բաշխումը ազդակիր հողատերերի միջև: Խուսափելու սոցիալական անարդարության մթնոլորտից, ոչ ազդակիր հողատերերին նույնպես հնարավորություն կտրվի ներառվելու ԿՎՊ ծրագրերում: Քանի որ ազդակիր հողատերերի թիվը փոքր չէ (մոտ 150), ազդակիրների և ոչ ազդակիրների միջև ընտրությունը խնդիր չէ:

3.2. ԿՎՊ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Այս բաժնում ներկայացվում են ԿՎՊ-ի ու ազդակիր հողատերերի կամ հողօգտագործողների ներգրավման հետ կապված սահմանափակումները:

Աշխատանքի հնարավորություններ. ազդակիր հողատեր լինելը դեռ չի երաշխավորում զբաղվածության ապահովում: Հողատերերին հնարավորություն կընձեռնվի մասնակցել վերապատրաստման ծրագրերին և դիմել աշխատանքի համար ըստ իրենց նախասիրությունների, հմտությունների կամ փորձի: Ընկերությունը կշարունակի տարածել այս ուղերձը Համայնքի հետ կապերի կոմիտեի և այլ միջոցներով: Միննույն ժամանակ, Ընկերությունը ջանքեր է գործադրում հնարավորության և նպատակահարմարության դեպքում աշխատանքի վերցնել ազդակիր հողատերերին: Օրինակ, ԿՎՊ և սոցիալական ծրագրերի մեծամասնության համար անհրաժեշտ են տեղացի բնակիչներ և հողատերեր ծրագրի ընթացքում որպես օգնական աշխատելու համար. սա ենթադրում է ինչպես տեղական մակարդակով ծրագրային միջոցառումների ղեկավարման և համակարգման համար աշխատանքային վերապատրաստման դասընթացներին մասնակցություն, այնպես էլ եկամուտի ապահովում:

Ներգրվում ԿՎՊ ծրագրերում՝ ԿՎՊ ծրագրերի նպատակն է հողի ձեռքբերման գործընթացի արդյունքում ազդակիր հողատերերի համար ապահովել այլընտրանքային կենսամիջոցներ: Կարևոր է նշել այն հանգամանքը, որ հնարավոր չէ ԿՎՊ միջոցառումներում ներառել բոլոր ազդակիր անձանց: ԿՎՊ ծրագրերում ազդակիր հողատերերի մասնակցությունը պարտադիր չէ, սակայն նրանց հնարավորություն է ընձեռնվում 3-ամյա ժամկետում (2015 աշնանից սկսած) ներգրավել տարբեր միջոցառումներում: Ընկերության և ծրագիրն իրականացնող գործընկերների կողմից ԿՎՊ ծրագրերը ներկայացվում են համայնքային հանդիպումների միջոցով, այդ թվում՝ գյուղապետարանների և լայն հասարակության անդամների միջոցով: Նման հանդիպումների նպատակն է ներկայացնել և բացահայտել ծրագիրը, երկարաժամկետ նպատակներն ու խնդիրները, դրանց իրականացման հիմնավորումը և տվյալ միջոցառման համար ընտրության չափորոշիչները (ներդրումը ծրագրին, նոր տեխնոլոգիաների վերաբերյալ տեխնիկական խորհրդատվության հետևելու պարտավորությունը, հողի և ջրի առկայությունը և այլն): Նախնական հանդիպումներից և պարզաբանումներից ելնելով, գյուղացիներն արտահայտում են կոնկրետ միջոցառումներում մասնակցելու իրենց պատրաստակամությունը՝ գրանցելով իրենց ցանկությունը, տվյալ ծրագրում ընդգրկվելու համար: Ծրագրի բնույթից կախված՝ դրան հաջորդում է ստուգումների և վավերացումների գործընթացը: Այլ ծրագրերի (անասնապահության) համար նախնական գրանցում չի պահանջվում. շահառուները հավաքվում են ծրագրի տարբեր փուլերի ընթացքում՝ մասնակցելով իրազեկման դասընթացներին, ստանալով տեխնիկական խորհրդատվություն և իրականացնելով արհեստական սերմնավորում իրենց անասունների համար:

3.3. ԿԵՆՍԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԿՎՊ ծրագրերի նախատեսված տևողությունը կազմում է 3 տարի՝ 2015 թ. աշնանից սկսած: Քանի որ ազդակիր հողատերերն արդեն իսկ ստացել են իրենց հատուցման գումարները, ապա ԿՎՊ-ն կմեկնարկի անձնական ֆինանսների և եկամուտների կառավարման վերաբերյալ իրազեկման և հիմնական տեղեկատվական

դասընթացներով և կշարունակվի գյուղատնտեսության ու այլ բնագավառներում իրականացվող այլ միջոցառումներով:

Արդեն մի քանի տարի է, ինչ Ընկերության կողմից իրականացվում են մի շարք սոցիալական ծրագրեր, որոնք մեկնարկել են մինչև հողի ձեռքբերման գործընթացը: Ազդակիր անձանց համար եկամուտների և օգուտների հասանելիությունը առավելագույնին հասցնելու համար անհրաժեշտ է համակարգել կենսամիջոցների ու սոցիալական ծրագրերը՝ կրկնօրինակելով հաջողված ծրագրերը (հաջողված մոդելները, տեխնիկական մոտեցումները և այլն):

Աղյուսան 3-ում համառոտ ներկայացված է 2015-2018թթ. համար նախատեսված ԿՎՊ միջոցառումների նկարագրությունը: Դրանցից ոմանք արդեն իրականացվում են սոցիալական ծրագրերի տեսքով, որոնք ժամանակի ընթացքում և անհրաժեշտության պարագայում կենթարկվեն որոշակի փոփոխությունների կամ կրնդլայնվեն՝ ազդակիր հողատերերի կարիքները բավարարելու նպատակով: Աղյուսակում ներկայացված միջոցառումների ցանկը վերջնական չէ, քանի որ գալիք տարիների համար նախատեսվում է մշակել նոր ԿՎՊ միջոցառումներ՝ ազդակիր հողատերերից ստացված արձագանքներից ելնելով: Լրացուցիչ կենսամիջոցների ստեղծման ծրագրերը կարող են ներառել վերապատրաստման դասընթացներ և մեղվաբուծության, թռչնաբուծության և այլնի աջակցման ծրագրեր:

Միջոցառումների բյուջեն հաշվարկվում է նախորդ ծրագրերի ծախսերից ելնելով և վերջնականապես հաստատվում է յուրաքանչյուր ծրագրի վերջնական նախագծի հիման վրա:

Ստորև ներկայացված ԿՎՊ բնագավառների ու միջոցառումների հիմքում ընկած են ուսումնասիրությունների արդյունքները, որոնք արտացոլում են Գնդեվազի բնակիչների և տվյալ տարածքի հովիվների կարծիքներն ու նրանցից ստացված արձագանքները, ինչը ներկայացված է վերոնշյալ Կետ 2 և 3-ում:

3.4 . ԽՈՐՀՐԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀԱՂՈՐԿԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունը նախատեսում է ազդակիր համայնքներին և համապատասխան շահագրգիռ կողմերին պարբերաբար տեղեկացնել ԿՎՊ միջոցառումների, դրանց ընթացքի և պլանների մասին: Նախորդ տարիների ընթացքում իրականացված սոցիալական ծրագրերի շրջանակներում այդ իրազեկումն ապահովվել է հետևյալ կերպ.

- Համայնքի Կապերի հետ Կոմիտեյի հանդիպումներ
- Ընկերության ամսական ամսագրեր
- ԿՎՊ ծրագրերի տարեկան թարմացումներ՝ փաստեր, թվեր, նպատակներ, ձեռքբերումներ և խնդիրներ
- Ֆոկուս խմբերի քննարկումներ
- Այլ պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումներ
- Անհատական այցելություններ ազդակիր ընտանիքներ
- Ծրագրերն իրականացնող գործընկերների կողմից ապահովվող խորհրդատվություն և շարունակական ներկայություն
- Մշտադիտարկման նպատակով տեղամասի այցելություններ և այլն:

Ընկերությունը նախատեսում է շարունակել վերոնշյալ միջոցառումները հողատերերի, հովիվների և այլ շահագրգիռ կողմերի հետ արդյունավետ կապն ապահովելու նպատակով: Համայնքների տեղացի օգնականներին նախատեսվում է ներգրավել ԿՎՊ միջոցառումների մշտադիտարկման և ծրագրային միջոցառումների համակարգման գործընթացներում. բոլոր գործողությունների վերահսկումն կիրականացվի Լիդիան Արմենիայի սոցիալական զարգացման մենեջերի/թիմի կողմից:

Աղյուսակ 3. ԿՎՊ միջոցառումներ

Բնագավառ	Միջոցառում. Ժամանակացույց	Նկարագրություն	Նշումներ, մեկնաբանություններ
Գյուղական ենթակառուցվածք	Գնդեվազի ոռոգման գծի նորոգում, 2015-2016թթ	<ul style="list-style-type: none"> ✓ Ընկերության կողմից իրականացվում է երկար տարիների ընթացքում չգործող Գնդեվազի հին ոռոգման ջրածի վերանորոգումը: Նորացված համակարգով նախատեսվում է ոռոգել մոտ 150 հեկտար հող: ✓ Ոռոգված տարածքը կենսամիջոցների լավ աղբյուր կհանդիսանա ազդակիր և ոչ ազդակիր հողատերերի և գյուղացիների համար: 	Հյուսիսային Գնդեվազն ունի բազմաթիվ այգիներ, և այն հայտնի է իր բարձր որակի հողով
	Անձնական ֆինանսների և եկամուտների կառավարում, աշուն 2015թ.	<p>Իրազեկման սեմինարները ներառում էին 4 թեմա.</p> <ul style="list-style-type: none"> ✓ Անձնական ֆինանսների և եկամուտների կառավարում ✓ Գործարարության և բիզնեսի հիմունքներ ✓ Ոռոգում, արածեցման կազմակերպում ✓ Գյուղական տուրիզմի զարգացում 	Սեմինարների նպատակն է բարձրացնել գյուղացիների և հողատերերի իրազեկվածությունը Հողի ձեռքբերման գործընթացի արդյունքում ստացված ֆինանսների կառավարման մասով:
	Արհեստական սերմնավորում, տեխնիկական աջակցություն 2016-17 թթ.	<p>Այս Նախագծի շրջանակներում նախատեսվում է կիրառել Գորայքում հաջողությամբ օգտագործվող մոդելը.</p> <ul style="list-style-type: none"> ✓ Սարքավորումների, սերմնահեղուկի և անհրաժեշտ նյութերի ապահովում ✓ Տեղացի անասնաբույժի վերապատրաստում ✓ Արհեստական սերմնավորման ծառայության ստեղծում ✓ Անասնապահների համար վերապատրաստման կազմակերպում՝ կենդանիների առողջության, հիգիենայի, 	<p>Ծրագրի նպատակն է.</p> <ul style="list-style-type: none"> ✓ Իրազեկման սեմինարների և պրակտիկ աշխատանքի միջոցով բարելավել անասունների առողջական վիճակը, սնուցումն ու հիգիենան ✓ Բարձրացնել կաթնարտադրությունը բարձր որակի սերմնահեղուկի և ժամանակակից սարքավորումների օգտագործման եղանակով ✓ Հզորացնել տեղական անասնաբույժի

Տեխնիկական աջակցություն, կրթություն . Անասնապահություն

Գյուղատնտեսություն, սննդի մշակում		սնուցման, հղիացման և ծննդաբերության վերաբերյալ: ✓ Շահառուներ՝ Գնդեվազի օրական հովիվներ	կարողությունները՝ որպես տեղական ռեսուրս և ծառայություն մատուցող
	Արածեցման կազմակերպում, հողօգտագործման բարելավում 2016-18թթ.	Ընկերությունը նախատեսում է աջակցել հովիվներին. ✓ Անասնապահություն, անասունների առողջապահություն, սնուցում ✓ Արածեցման կազմակերպում ✓ Ռոտացիոն արածեցում ✓ Նյութերի և այլ միջոցների ապահովում	2016թ. ամռանը տեղական փորձագետի կողմից սեզոնային հովիվների հետ անցկացվեց մի քանի հանդիպում հողօգտագործման, արածեցման կազմակերպման, պայմանագրի իրավական կողմի և այլ հարցերով: Հովիվները կարող են ընդգրկվել սոցիալական ծրագրերում:
	Գնդեվազի մրգերի չորանոցի ծրագիր	Ընդլայնել և պահպանել չորանոցն ու առնչվող աշխատանքները ✓ Ընդլայնել տեղական կոոպերատիվի կարողությունները ✓ Ներառել ազդակիր միրգ աճեցնող գյուղացիներին որպես վերջնական սպառողների և շահառուների (կազմակերպելու իրենց մրգերի չորացումը և բարելավելու արտադրանքի որակը) ✓ Ներառել խոցելի ընտանիքներին ծրագրի սահմաններում ստեղծված աշխատանքներում ✓ Ապահովել չորանոցի գործունեությունը ողջ տարվա ընթացքում ✓ Մրգաչրերի վաճառքի կազմակերպման նպատակով ապահովել տեխնիկական աջակցություն ✓ Ընդլայնել արտադրանքի տեսականին՝ ներառելով խոտաբույսեր, լոլիկ և այլն	Ձեռքբերումներ 2014 թ-ից ի վեր ✓ Հիմնվել է չրանոց և տրամադրել սարքավորումներ ✓ Ստեղծվել է և գործում է կոոպերատիվ, տրամադրվել է գրասենյակային կահույք և համակարգիչ (օգտագործվում է հաշվապահության համար) ✓ Ընդլայնվել են մասնակից գյուղացիների հնարավորությունները մրգերի մշակման տեխնոլոգիաների մասով ✓ 2015թ. չորացվել և վաճառվել է 600 կգ ծիրան ✓ 2016թ. նախատեսվում է արտադրել ավելի քան 1200 կգ սաքբեր մրգեր (դեղձ, խնձոր և այլն) ✓ Համայնքի 5-6 կանանց համար ստեղծվել են սեզոնային/վճարվող աշխատատեղեր
	«Ջերմոցային տեխնոլոգիաների միջոցով կենսամիջոցների բարելավում» 2016-17թթ.	Ջերմոցները՝ որպես կենսամիջոցների և եկամուտի աղբյուր, մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Գորալքում առկա է ջերմոցի շահագործման հաջողված մոդել: ✓ 40-50 գյուղացիների համար կազմակերպել նոր տեխնոլոգիաների և այգեգործության ու ջերմոցային տեխնոլոգիաների վերաբերյալ	Մինչ այժմ ձեռքբերումները. ✓ 7 ջերմոց, որոնք կառուցվել և գործում են Գնդեվազում (որոնցից 1-ը կուլերցիոն, մյուսները՝ ընտանեկան) ✓ Ծրագրի մասնակիցներն անցել են հողօգտագործման կազմակերպման նոր մեթոդների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ

	<p>տեխնիկական գիտելիքների դասընթացներ</p> <ul style="list-style-type: none"> ✓ Աջակցել 7 ընտանեկան ջերմոցներին (որոնք ներառում են մոտ 45-50 անձ), 6 բարձր բերքատվությամբ այգիներ (30 անձ) ✓ Ջերմոցների սեփականատերերը տրամադրում են իրենց ներդրումը ծրագրում ✓ Ջերմոցները նախատեսվում է շահագործել շուրջ տարին (ապահովելով ջեռուցում և կաթոցային ոռոգում)՝ եկամուտ ստանալու նպատակով 	<ul style="list-style-type: none"> ✓ Գյուղացիների լայն խմբերի համար կազմակերպվել են ցուցադրության օրեր
<p>Այլընտրանքային /նոր մշակաբույսերի ներմուծում տարածքում (բրոկոլի և այլն)</p>	<p>Բրոկոլիի արտադրությունը հեռանկարային է և հավանաբար կընդօրինակվի Գնդեվազում որպես կենսամիջոցների և եկամուտի այլընտրանքային աղբյուր: Այն կարող է աճեցվել շուրջ տարին բաց պայմաններում և ջերմոցներում, հանդիսանում է նոր մշակաբույս և լայնորեն սպառվում է շուկայում: Ընկերությունը նախատեսում է ձեռնարկել բրոկոլիի փորձնական աճեցման ծրագիր Գնդեվազում 2017 թ. և հետո:</p>	<p>Ներկայումս Գորայքում հաջողությամբ արտադրվում է բրոկոլի (600քմ)՝ գյուղացիների (5 կանանց) համար ապահովելով եկամուտի աղբյուր:</p>
<p style="writing-mode: vertical-rl; transform: rotate(180deg);">Փոքր և միջին բիզնեսի զարգացում</p>	<p>Փոքր բիզնեսի աջակցություն</p> <ul style="list-style-type: none"> ✓ Փորձնական ծրագիրը մեկնարկել է Գնդեվազում 2016 ամռանը. ✓ բիզնես մոդուլների մասին դասընթացներ փոքր բիզնեսով հետաքրքրվող կանանց համար ✓ տեխնիկական աջակցություն կանանց համար բիզնես պլանների մշակման նպատակով ✓ փոքր բիզնես-գրանտների տրամադրում կանանց կողմից ղեկավարվող 14 բիզնեսների. մեղվի արտադրություն, հրուշակեղենի արտադրություն և այլն ✓ Ընտրված մասնակիցները կապահովեն ֆինանսական կամ այլ բնեղեն ներդրում 	<p>1-ին տարում ցուցաբերած առաջընթացից և ազդեցությունից կախված՝ այս միջոցառումը կարող է ընդլայնվել և դիվերսիֆիկացվել: Ծրագիրը հիմնականում նախատեսված է կանանց կողմից ղեկավարվող բիզնեսների համար՝ կանանց հզորացնելու և աճի հնարավորություններ տալու նպատակով</p>
	<p>Միկրոֆինանսավորում 2017-18թթ.</p>	<ul style="list-style-type: none"> ✓ Համակարգել, որպեսզի միկրոֆինանսավորում իրականացնող կազմակերպությունները գործեն նաև տվյալ տարածքում (օրինակ,

Աշխատանք, վերապատրաստում		<p>տարածքում աշխատող <i>Կամուրջ</i> միկրոֆինանսավորման կազմակերպության միջոցով)</p> <ul style="list-style-type: none"> ✓ Կազմակերպել միջոցառումներ, որտեղ միկրոֆինանսավորում տրամադրող կազմակերպությունները կներկայացնեն իրենց ծառայությունները 	
	<p>Վերապատրաստում, հմտությունների ուսուցում 2016-18թթ.</p>	<p>Այս միջոցառման նպատակն է հողատերերի մոտ ձևավորել կենսամիջոցների ստեղծման այլընտրանքային հնարավորություններ.</p> <ul style="list-style-type: none"> ✓ Անգլերեն լեզվի ուսուցում ✓ Խոհարարություն, հրուշակագործություն, սեղանի հարդարում ✓ Կարուձև ✓ Մեքենաների մեխանիկներ ✓ Վարսավիրներ ✓ Այլն 	<p>Մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին չի երաշխավորում աշխատանքի ստացում, այն հնարավորություն է տալիս ձեռք բերել մի շարք հմտություններ, որոնք կարող են օգտագործվել հողատիրոջ կոմից աշխատանքի և վճարովի ծառայությունների նպատակով: 2016թ. այս դասընթացներին ներառվել են մոտ 30 հողատեր (հիմնականում կանայք)</p>
	<p>Տնկարան, աշխատուժ պահանջող այլ ծրագրեր (վերանորոգում, շինարարություն և այլն)</p>	<p>Հնարավորության դեպքում Լիդիան Արմենիա ընկերությունը</p> <ul style="list-style-type: none"> ✓ ազդակիր հողատերերին կներառի որպես աշխատող տարբեր ենթակառուցվածքային ծրագրերում, ինչպես օրինակ Գնդեվազի ոռոգման ջրագծի նորոգումը ✓ Գնդեվազի տնկարաններ (ապահովում են մոտ 15-20 կանանց զբաղվածություն) ✓ Համայնքի ենթակառուցվածքի ծրագրեր (դպրոցի պատուհանների փոխում և այլն) 	

4. ԽՈՑԵԼԻ ԱՆՁԻՔ

4.1. ԽՈՑԵԼԻ ԱՆՁԱՆՑ ԸՆՏՆՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱԶԱԿՑՈՒՄԸ

Գնդեվազում իրականացված ուսումնասիրության ընթացքում ստորև բերված չափանիշներով ընտրվեցին մոտ 20 խոցելի տնային տնտեսություն.

- ✓ Տնային տնտեսությունների եկամուտներ ու ծախսեր
- ✓ Կենցաղային իրերի առկայություն
- ✓ Տնային տնտեսությունների ամսական ծախսերի բաշխում
- ✓ Առողջական վիճակ, հիվանդություններ, հաշմանդամություն
- ✓ Տարեց և միայնակ ծերեր

✓ Այլ նկատառումներ

Հողի ձեռքբերման ողջ ընթացքում բոլոր խոցելի հողատերերին կամ հողօգտագործողներին տրամադրվել է հետևյալ աջակցությունը.

- ✓ Մասնավոր խորհրդատվություն հողի ձեռքբերման գործընթացի պարզաբանմամբ և հարակից փաստաթղթավորմամբ
- ✓ Նյութատեխնիկական աջակցություն տարեցներին կամ այլ կարիքավոր անձանց, մասնավորապես՝ փոխադրում Գնդեվազի Ամուլսար ինֆորմացիոն կենտրոն, բանկեր, նոտարական կամ կադաստրային գրասենյակներ ըստ անհրաժեշտության
- ✓ Աջակցություն բարդ իրավաբանական գործերի հետ կապված՝ դատական որոշումների, գործերի դյուրացում/արագացում
- ✓ Պետական մարմիններից կամ անձանցից իրավաբանական կամ վաճառքին վերաբերող այլ փաստաթղթերի ստացման գործընթացի դյուրացում:

Խոցելի անձանց աջակցումը հանդիսանում է շարունակական գործընթաց, որը ներառում է մի շարք հիմնական տարրեր.

- ✓ Մոցիալական ծրագրերում ներգրավվածության ապահովում - ընթացքի մեջ է
- ✓ Հնարավորության դեպքում զբաղվածության ապահովում - ընթացքի մեջ է
- ✓ Անհրաժեշտության և պահանջի դեպքում ստացված հատուցման գումարներով նոր հողակտորների ձեռքբերում
- ✓ Որակավորման կամ վերապատրաստման դասընթացներում նրանց ներգրավում՝ Ընկերությունում և կապալառուների հետ նրանց հնարավոր աշխատանքի հնարավորություններն ընդլայնելու նպատակով:

Կենսամիջոցների մշտադիտարկումը կիրականացվի վարկատուների պահանջով՝ 2016թ. ապրիլին հրապարակված ՀԶԿՎՊ-ով սահմանված կարգով: